



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՐԵՍԵԿՏՈՐԻ ՊՐԱՎԱԿԱՐԱԳԻ

1888

ԱՊՐԻԼ ՄԱՅԻ ՅՈՒՆԻՍ

## ՀԱՆԴԻՍԱՆ ՀԱՅԱԿԱՐԱԳԻ



ԱՍՏՈՒԱԾԱՇԱԽՆՁ ԳԻՒԲՔ

ՈՂՈՐ Ժամանակակից և կրտսերագոյն պատմիչք այս  
մեծ գրությոն և ծառայութեան բավանդակ արդինքը  
կու տան Թարգմանչաց, և մանաւանդ իրենց մեծ և բազ-  
մահույակ վարդապետաց՝ Յահակայ և Սերովալաց:

Առնեց անողանք, - որչափ հասեր է առ մեզ 'ի պատ-  
մութեանց և 'ի յիշատակարանաց, - իրենց սրբառուն  
և աստուածահանց վարք և հայկական մատենագրու-  
թեան մատուցած ծառայաթիւնք և արգասիք արդէն  
ծանօթ են մեզ: Ուստի առանց յերկարելու 'ի բանս  
անոնց անկարօտ գովութեան, վութանք իրենց ձեռքով  
մեզի ընծայուսուծ թարգմանութեանց վրաց դարձնել մեր  
ընթերցողաց մտադրութիւնն: Այդ հոգեռունդն սրտից

և աստուածապարգև վարդապետաց մեջի աւանդած բազմաթիւ և բազմատեսակ,  
ու կրաւակիք իմաստնեցն Երրուայ զարմանքն ու նախանձը յաճախող վաստակոց  
մէջ ինչպէս պարանակութեամբն՝ ասանկ ալ լիզուիք արուեստովն, թագմանութեան  
հաւատարմութեամբ, գեղովն ու վայելչութեամբ նախամեծար պէտք է սեպուին Աս-  
տուածաշունչ զրոց հրաշճառ, թարգմանութիւնք, զոր առանց շափազնեցութեան  
կրնակը հայկական կրն և նոր թարգմանութեանց անզուգական և ամենընտիր ե-

բախացրիք սեպել, մեր գրականութեան ամենէն գերազանց երկասիրութիւնն, և անոր վրայ աշխատօղներուն զլուխ գործոց և անմահական պարծանք:

Խօսինք համառօտիւ որշափ երկասիրութեանս չափն ու նպատակը կրնայ տանիլ,

- Ա. Եօթանանից թարգմանութեան վրայ, որոյ համեմոտ եղած է հայկականն:
- Բ. Ասորտկան հին թարգմանութիւնք:
- Գ. Առաջին թարգմանութիւն սուրբ Գրոց՝ 'ի հայ լեզու յասորականէ:
- Դ. Թարգմանչաց երթն՝ 'ի թիւզանդիոն:
- Ե. Երկրորդ թարգմանութիւն՝ 'ի յունէ:
- Զ. Հնագյղն օրինակը սուրբ Գրոց յարեւելու և յարեւմուսու:
- Է. Հնագյղն գրչագիրք հայկական Աստուածաշատրւնչ մատենից:
- Ը. Կարգ և զասաւորութիւն սուրբ Գրոց՝ 'ի մեր գրչագիրս:
- Թ. Հին կոռակարտնաց մէջ Անյայտ կամ Անհարազատ ուկուած զրբեր:
- Ժ. Նոյն 'ի նոր կոռակարտնա:
- ԺԱ. Հարազատութիւնն և ընտրութիւնն հոյ թարգմանութեան:
- ԺԲ. Արդեօք ամրոց Աստուածաշատրւնչ գրոց թարգմանութիւնն հինգերորդ դարմ մէջ եղած է:
- ԺԳ. Հայկական թարգմանութեան վրայ վերջին աշխատաւթիւն, 'ի հինգերորդ դարու:
- ԺԴ. Յարգ հայ թարգմանութեան:

## Ա. ԹԱՐԳԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՕԹԱՆԱՄՆԻՑ

Պատղմեայ Եղբայրասիրի խնդիրն առ քանոնայապեսն Հրեից: — Եօրանասից երբն յԱղեքսաներիսա Եղիպատոսի: — Պատղուրիւն քարգմանութեանն և աշանդը: — Անոր յարդն և ազնուուրիւն:

Քրիստոնեայ աշխարհն և սրբազան դպրութեանց հետամուտք արդէն գիտեն քաջ թէ աստուածախօս և հոգեշունչ զիրք, որ ընդհանուր անուամբ՝ աստուածայինն ներկնչութեամբ գրուած և իր խոսքն ու պատուիրանքը բովանդակելնուն՝ Աստուածաշունչ և Սուրբ Գիրք կը կոչուին, հրէական աստուածընտիր ժողովրդեան մէջն առնուած մարգարէից ձեռքով, և Հրէից համար մասնաւորապէս հերրայական (ու երրեմն նաև քաղդէական) լիզուով շարագրուած են: Անսնց գրուելն, և որոց համոր զիմաստրապէս շարագրուած էին՝ ընդհանուր ըլլալէն շատ ետքը, ինչպէս կ'աւանդուի, Եղիպատացոց Պաղամէոս Փիլագիրի վկա (Եղբայրասէր) թագաւորն ուզելով իր լանքովն Աղեքսանզրից մէջ հաստատած մատենագարանն ընտիր, օգոստակար և հետապննական գրուածներով ճոխացընել, իր մատենագետին՝ Դեմետրեայ Փալերացոյ յանձնեց Հրէից օրինաւատում գրոց մէկ օրինակն, ու անոր յունական թարգմանութիւնն ձեռք ձգել, Դեմետրիս ալ թագաւորին կողմանէ զրեց առ Եղիպատար քահանայապետ յիրուսաղէմ, ու նաւիրակութեամբ երեք անձինք ու մեծագին ընծաներ դրկելավ, ինդրեց իրմէ Մովսիս գրոց մէկ օրինակը, և հմատ թարգմանիչք յԵրրայցեցոց, որ կարենան փոխել զայն 'ի յոյն: Արիստէոս, այս զիաց պատմիչը, երեք նուիրակաց մէկն էր:

Վահանացապետը սիրով ընդունեցաւ Պաղոմեաց թագուարի առաջարկութիւնը .ու Մավական օրինաց և բովանդակ Աստուածաշնչն գրոց մէկ սոկեզիր գաղափարը յանձնեց Խօթանասունուերկու հմուտ և վարժ թարգմանչաց , գորոնք արքայն Եղբայրասէր արժանաւոր պատուալ մեծարելով . Ազեքանդրից մօա Փարսացւոց կղզւոյն մէջ տեղ և բնակութիւն տուաւ անոնց և ամէն զիւրութիւն , ուր պարապելով անդապար իրենց յանձնուած աշխատանքին՝ ըստ աւանդելոյ սմանց , եօթանասուներից օրուան մէջ զիւրութիւն զայն :

Այս պատմութիւնը հետևեալ պարագաներով կը պատմուի Մակարյեցւոց չորրորդ գրոց մէջ որ է 'ի կարգի անյայտ և անվաեր գրոց հին կտակարանի , և որոյ թարգմանութիւնն ընացաւ առ մեզ . « Պաղոմէոս Մակեդոնացի իրրեւ գագարեաց ըզտեղի կալոր Եցիպատոս , և հոչակենալ զօրացաւ համբաւ գիտութեան նորաւ և իմաստութեան , միաբանեցին Եցիպատոցիք կարգել կացուցանել զնա թագուար 'ի վերաց աշխարհին : Եւ յօրժամ նստուն նա յաթու թագաւորութեանն այնուհետեւ զամենայն փոյշ և զնան 'ի մէջ առնորի ' ի մի վայր ժողովիլ զա . մենայն զիրու իմաստոնց Յանկացաւ ունել 'ի դիւնան մատենից իրոց նաև զգասն և չորս զիրու սուրբու : Կ գրեաց թուղթ առ քահանանցապետն մեծ Արուադակմասուոց քաղաքին , հանդերձ ընդացիք պատարագաց . աղաչէր իննդրէր՝ արս եւ թանասուն և երկու 'ի Հրէից յդիլ տունն , ի զարգացեցին հասակաւ և գիտութեամբ օրինաց : Զոր ընկապեալ քահանանցապետին զետովթն արքուն վաղվազակի որոշէր ընտրէր եւ թանասունն հմուտս և մջազակս , և առաքել յԵցիպատոս՝ կարգեալ նորաց առաջ նորդ զԵցիպատորու , ոչ ինչ ընդհատ 'ի նոցանէ անուանի առաքինի վարուքն , զիտութեուիք և իմաստութեուիք զրոց սրբոց : Փացւուորն Պաղոմէոս իրրեւ ետես զնուաս ժամանեալ հասեալու , պատուէր հարամանի տայր ածել 'ի սենեակոն զօրս յորդարեալ պարտուտեալ էր , եւթանասուն ըստ թուոյ նոցա . և զպիրս ատենակալս մից մից 'ի նոցանէ յիւրցն հարկանել , 'ի զրի առնուզ հելենացի տառիւք զթարգմանութիւն նոցա : Եւ արգելոց խափանէց զտեսութիւն նոցա ընդ միմեանս , գոյքէ երբեք միաբանեցին ածել մուժանեն փոփոխութիւն 'ի զիրու իրեանց : Եւ զպիրըն ատենակալք գրեցին 'որպէս թելաղիր ինչէին նորաց հերբայեցին , զթարգմանութիւն քսան և շորս մատենիցին : Եւ իրրեւ յամրակ զործոյն հասեալ ժամանեցին , ածէր կացուցանէց զնոսա Եղիազարոս առաջի թագաւորին . և 'ի համեմատութիւնն արկեալ , գտանէին միաբան և միախորհուրդ զթարգմանութիւնն » :

Աւելի մանրամասն . թերեւս ոչ այնշաբ ստուգապատում սճով , ուրիշ հին գըրութեան մը մէջ ալ , որց թարգմանութիւնն 'ի նախնեաց հասած է մինչեւ առ մեզ , մերթ անանուն և մերթ Եպիփանու ընծայելով . Դնենք և զայն՝ համաստելով , իրրու հետաքննելի և հաճոյական բանասիրաց :

« ... Պաղոմէոս թագաւորեաց յԱզեքանդրիա , որ կոյեցաւ Եղբայրասէր , և այր իմաստասէր . որ գրանոց կազմեաց ժողովիլ զամենայն զիրու որ 'ի վերաց երկիր . զրել թուղթս և յօժարեցուցանել զամենայն թագաւորս երկիր . . . Եւ իրրեւ իրքն յաղողեցուն , և գրեանն ամենայն աշխարհաց ժողովիցաւ , եհարց թագաւորն օրում զգրեանն հաւասացեալ էր 'ի միաւմ աւուրց . քանի գիրք ժողովեալ են 'ի զրանոցին . և նա ասէ 'չըրք բիւրք և ութ հարիւր մի աւելի կամ պակաս . բայց լսեմ թէ աւելի զիրք գոն յաշխարհի 'ի կողմանս Եթէուպացոց . Հնդկաց և Պարսից և Ելիմացոց և

Ասորեստանեաց և Բարեկացոց և Քաղդէացոց . առ Հառիմայեցիս և Փիւնիկեցիս , յԵլլադայ , այլ և յԵրուսաղէմ և 'ի Հրէաստանի գոն ասսուածային զիրք մարգարէցին , որ պատմեն վասն Աստուծոյ և աշխարհագործոթեանց , և այլ ամենայն հասարակաց օգտութեան վարդսապեսութիւն : Արդ եթէ հաճոյ թուի քում թագուտորութեանդ առաքել վասն այսոցիկ յԵրուսաղէմ , և զրեն վարդսապեսուն և տուաքեն առ քեզ . զի զայն դիցես 'ի քում բարեպաշտոթեան գրանոցիդ :

« Յայնժամ գրէ թուղթ օրինակ զայս . - Թագուտոր Պտղոմէսո որ յԵրուսաղէմ վարդսապեսօք Հրէից յոյժ խնդալ . Գրանոց է իմ կազմեալ , և բազում զրեանն ժողովեալ յիւրաքանչիւր ազգաց և 'ի նմա 'ի ներքս եղի . բայց լսեմ թէ առ ձեզ գոն գրեան մարգարէցին որ վասն Աստուծոյ և աշխարհագործոթեան ցուցանեն . և զայդ հանդերձ այլովք առանց նախանձու ցանդացեալ գրեցի առ ձեզ , զի առաքիցէք ինձ վասն պատույ , և ոչ քինու և շարակամութեամբ , զի ոչ եմ այդպիսի իրաց 'ի ինդիր . այլ վասն հաւասոց և ձեր օգտի զդոսա խնզրեմ . և վաղնջուց 'ի մէնչ առ ձեզ շեալ բարեմտութիւն զմտաւ ածէք ...

« Եւ թուղթս առաքեցաս . Նմտնապէս և ընծայքս : Եւ նոցա ընդալեալ զթուղթս և ընթերցեալ , և զորս առաքեացն տեսեալ , յոյժ ուրախ եղեն . և առանց յապաղելց' զգրեանսն ոսկով երբայցից իւղուաւ գրեալ առաքեցին քսան և երկու զիրք որ յացանի օրինաւորք էին , և ելթանասուն և երկու որ 'ի ծածուկք էին : Խոկ թագաւորն ընկալեալ և յառեալ 'ի նոսա , և ոչ կարացեալ ընթեռնուլ , վասն զի զիրն երբայցից էր և բանն երբայցից՝ զբեալ երկրորդ թուղթ ... Արժանի արարէք թարգմանիշու մեզ առաքել որ յերիտասարդական հասակի իցեն . և ճշգրտութեամբ երբայցից և հելլենացի լնդուաւ իմաստացեալ . և վարժ ուսմամբ : Եւ յայնժամ զասացեալս զեւթանասուն և երկու արս թարգմանիշը ընդրեալս 'ի վարդսապետացն Հըրէից առաքեցին , ըստ օրինակին զոր սրար Մովսէս յորժամ ել 'ի լեառն հրամանաւ Տեառն ... ըստ սմբն օրինակի և սրբա առաքեցան որբ թարգմանեցին զիին կըտակարանս 'ի Փառան կղղումն յանդիման Ազեկսանդրի . ուր շննեաց երեսուն և վեց սենեակս , երկու երկու արգելեալս յայցուի մինչև շերեկոյ . և երեկոյին զնոսա 'ի նաւակսն հանեալ և անցուցեալ յայնկոյս յապարանսն Պտղոմեայ թագաւորի , և ընդ նմա ընթերել ... զի մի կարացեն խորհել ընդ միմեանս , այլ առանց իրերաց գիտելոյ թարգմանեցեն : Եւ այնպէս թարգմանեցին երկու երկու արգելեալս 'ի սենեակ . և երկու երկու մանկունս ընդ նոսա արգելեալս 'ի սպասաւորութիւն նոցա և պատրաստել զդարման նոցա , վասն փուշեանակի զբելցն . և սենեակ կրկնակի շինեաց , և պատուհանս 'ի կողմանէ ոչ եթող , 'ի վերուստ 'ի ձեզուանէն լուսանցը երաց . և այնպէս արգելեալք ընդ փակով յայցուի մինչև շերեկոյ թարգմանեցին զամենայն կտսակարանս երկու երկու զցդ զմի զիրս , սկսեալ յԵրարածոյն , և 'ի կասորել առաջին զրուցին զգիրսն , տային ցերկրորդն , և յերկրորդէն ցերրորդն . այնպէս շուրջ եկեալ մի զիրք երեսուն և վեց , և թարգմանեցաւ կտսակարանքն որպէս վերտառոյն ասուաք : Եւ յորժամ կասորեցաւ , նատաւ թագաւորն 'ի բարձր աթոռ , և երեսուն և վեց ընթերցորդն առաջին նորա . նախանձ ունելով երեսուն և վեց զրոյն միմեանց միարան գտանել , և հաւասար յերրայցեցւոյն , առնթեր ունելով զերբայցից օրինակն , և միոյն ընթերցեալ այլոցն ամենեցուն միտ գնելով յանդիր ման թագաւորին , և ոչ գտաւ ամենեւեին երկրանաւոթիւն » :

Այս հատուածը գրեթէ բառ առ բառ կ'ընթօրինակէ Վարդան Վարդսապետ 'ի Մեկնութեան ասղմուաց , ընծայելով զայն Եպիփանու կիպրացւոյ :

Հմնք Արիստէոսի կ'ընծայեն զայս մանրամասն դրութիւն. զոր անհարազատ կը համարին՝ բազմագոյնք յարդի քննադասոից: Բայց իրևէ զատ յառաջ և յետոյ, գրիթէ նոյնպիսի պարագաներով կ'աւանդեն և այլ հմուտ և ուժենայն հաւատարմաթեան արժանաւոր անձինք, որք և ժամանակաւ մերձաւորք էին Պատղմէոսի Փիլադելֆիայ. ինչպէս Արխօսորուլու աղեքսոնդրացի, որ կը յիշատակուի Մակարացեցոց գրքին մէջ. Փիլոն հերբայեց հին և սուսահաւատ վարդապետներէն՝ Յուլիոս Վլայ, Երանոս, Կղեմէս աղեքսոնդրացի, Կիրեղ Երուսաղէմի, Եպիստան և այլք: Մակայն հաւանականագոյն կ'երենայ թէ այդ պարագայց մեծագոյն մասը՝ որ օտարանալ Թուին՝ ի ճշմարտութենէ: Հրեայք աւելցուած ըլլան, եօթանատուն բարունեաց այս թարգմանութեան յարգն բարցրացընելու համար, նոյն սրբյն Յուստինոսի օպերէն (յերկրորդ դարու քրիստոնէութեան), որով աւելի առասպելյապատում կերպարանք մը տուած այդ Նշոնաւոր և իրական գէպքին: Սուդրն Յուստինոս առանց ամենեին տարակոյս մը ցուցընելու, - և կ'երենայ թէ իր աստենին ալ կային երկիմար, - կ'աւանդէ թէ յԱղեքսոնդրիա գտնուած ատեն Հրեայք պատմեցին իրեն թէ թագւորը եօթանատունուերկու թարգմանիչըը առանձին սենենակներու մէջ փակել տուած ըլլայ. և թէ անոնցմէ ամէն մէկը ամբողջ սուրբ Գրոց թարգմանութեան անդադար պարապելով, երբ իրենց աշխատանքը աւարտելով իրարու քով եկան, մասնաւոր պանչելեք ամենուն թարգմանութիւնն բառ առ բառ, տոտ առ տոտ բոլորպափն մէկմէկու համաձայն գտնուեցաւ: Յառաջ բերենք իր խօսքերը. « Եւ իբրև հասու եղև (թագւորն) զի եւթանատունը ըլն ոչ միայն նովին մոտք, այլ և նովիմքը վարեցան բառիք, և ոչ խկ ցմի բառ օտարացան յառ միմեանս միաձայնութենէ, այլ և զնոյն և զնոյին իրաց գրեցին, յապութիւն կրթեցաւ, և հաւատացեալ թէ աստուածային զօրութեամբ գրեցաւ թարգմանութիւնն, ամենայն պատույ արժանիս զնոսսա վարկաւ, որպէս արս աստուածահանցու. և բազում պարգևագ հրամոն ետ նոցա զառնալ՝ ի հայրենիս իւրեանց. և ընդ զիրսն սրբնացեալ՝ որպէս արժան էր, և աստուածային մեծարանք պատուեալ, անդանօր զետեղեցցց: Զայսոսիկ ոչ ձեզ առասպելք, արք կերենագիք, և ոչ մոտիսայ պատմութիւնս ճառեմք. այլ քանզի յԱղեքսոնդրիա հանդիպեալ. և զիետոս սենենակն ի Փարոս տեսեալ տակալին մնացեարս, յորոց անդն կային, իրեւ ի հայրենի իրացն աւանդապահ: աց լուեալ, զայսոսիկ պատմեմք. զորս և յայլոց ի դէպ է ձեզ ուսանել, և առաւելապէս յորոց վասն սոցին իրաց պատմա զրողաց. յիմաստուն և յերեւելի արանց, ի Փիլոնէ և ի Յովուեպոսէ և յայլոց յուղից »: — Յօդոր առ հելլա:

Առանց ուզելու այս պատմութեան յարակից հանգամնաց և աւանդից սոտ գութեան վրայ վիճել որ մեր նպատակէն գուրս է, բոււական կը սեպենք ըսել թէ եօթանատուներկու թարգմանաց երկասիրութիւնը մեծասպէս հաճոյացաւ թաշտորին. և իր մասենսադարանին մէջ պատուալ ու զգուշաւոր իննամքը պահել տուած զայն: Արքունական հաճութիւնը, ու թարգմանաց հերբայական և յշն լեզուի կատարեալ հմտութիւնն մեծ յարգ և արթէք աւելցու իրենց աշխատանաց. և որուն աղնուագոյն գովութիւնն է՝ որ նոյն ինքն բանն մարդացեալ որ իր հոգւովն ազգեց և խօսեցան մարդարէից թերնով, ինչպէս նաև իր սուրբ առաքեալքն նոյն թարգմանութիւնն գործածեցին, որպէս քաջայալ է յաւետարանաց և յառաքելական թղթոց:

Հետեւարար նոյն յարգն ու մեծարակ ցուցին նաև քրիստոնէութեան առաջին դարերէն հարք ու վարդապետք եկեղեցւոյ. և երբ ժամանակ անցնելէն ետքը սուր. ըստ Հերոնիմոս ուզեց նոր թարգմանութիւն մը ընծայել 'ի հերրայականէ 'ի բատին. անոնց շատին, - մանաւանդ իր ժամանակակցաց, - դժկամուկութեանն ու թարգմանչին կրած հալածանաց պատճառ եղաւ:

Կը վկայէ Եւսեբի ('ի Քրոնիկոնին). « Յամենայն կողմանց իսկ յայտ է, թէ եւթանանիցն թարգմանութիւն 'ի հին և յանխալ օրինակաց Երրայեցւոցն թարգմանեցու... մանաւանդ զի և եկեղեցի իսկ Քրիստոսի' որ ընդ ամենայն տիեզերու տարածեալ է, զնա միայն կրէ, զոր և կենտրարին մերոյ առաքեալք և աշակերտք 'ի բնէ աւանդեցին 'ի կիր արկանն»: Իրմէ յառաջ՝ սուրբն Երանոս եպիսկոպոս Լուգդոնի. « Առաքեալք միաձայնին ընդ նախասացեալ թարգմանութեան, և թարգմանութիւնն համասցանի առաքելցոց աւանդութեան: Գանդի և Պետրոս և Յովհաննէս և Մատթէոս և Պաւլոս, և այլք զինի և նոցին հետեւողք, զմարդարէութիւնս ամենայն այնպէս ճառեցին, զոր օրինակ ունի ծերոցն թարգմանութիւն: Վասն զի մի և նոյն հոգի Աստուծոյ, որ 'ի մարգարէս կանխաւ քարոզեաց, թէ որ և սրբախո՞յինիցիք գալուստն տեառն Քրիստոսի, և 'ի ծերս բարուք թարգմանեաց զբարուց մարդարէացեալըն, նոյն ինքն և յառաքեալը աւետորանեաց »:

Աչելորդ կը համարինք այլոց նամասուր և պատկառելի հարց եկեղեցւոյ և վարդապետաց վկայութիւնն 'ի մէջ ամել: Ցիկննք միայն 'ի մերոց զսուրբն Ներսէն Շընորհափ, որ կ'ըսէ (Մէկն. Մատոր.) « Քան զալլմն ամենեսին արժանի հաւատարմութեան եւթանասունքն էին. որոց յօլվագոյն ամօք յառաջ քան գծնունդն Քըրիստոսի 'ի միասին գումարեալ գրեցին. որք և ազատ իսկ են յամենայն կարծեսց՝ նորի ժամանակաւն և ապա բազմութեամբն, և զի զմի բան ասացին ամեններեան »:

Մեր ազգն թէպէտ և ունեցաւ գաղթականութիւնն 'ի 'ի Հրէից՝ տոհմին ազնըւութեամբ և պատմութեամբ բարգաւած բազրատունեաց ցեղը, որք որչափ ալ ջանացին և ուզեցին առջի բերան պահէլ իրենց ազգութիւնն, բայց ապա ըռնազատաւած 'ի հարկէ և 'ի հանգամանաց ժամանակին, չուչացան հայ աղդին հետ ձուլուիլ բոլորովին. որով մինչ 'ի Քրիստոս զրեթէ ամենեւին կամ ամենափիշ յարտերութիւն ունեցան մերքն ընդ Հրէից, անծանօթ մեալով նաև անոնց զրաւոր օրինաց: Իսկ երբ թաղէսու ու Բարդթագիմէսու սուրբ աւետարանին ասսուածակրաչ քարոզութեան լցոյլ բերին 'ի Հայաստան, ու իրենց առաքելալան արդինաւոր վաստակօք ծաւալեցին, հարկ եղաւ նաև հին կոսակարանն ալ ընդէլացընել այն ժողովրդեան՝ որ ոչ եւս երկրաբարը, եր յայսը երկրաւոր և ունայնատուր աստուածներէն վերցնելով կը հաստատէի միակ ու ճմմարփս Աստուծոյն վարդապետութեանց ու խոստմանց հաստատուն հիման վրայ: Բայց թէ որ լեզուով կը մատուցաւէր իրեն այս պարզելը, պիտի տեսնենք համառօտիւ:

### Բ. ԱՍՈՐԻ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

Այլ և այլ մին բարգմանեսուրիւնք Ա. Գրոց յասորի շեղու: — Փեշիտաս կոչուածք: — Ժամանակ բարգմանեսուրիւնք:

Մեր արգէն քիչ յառաջ միշատակած խոռքը՝ հարկ է միւսանգամ երկրորդել 'թէ ինչպէս ասորի լեզուն և զարութիւն մուտ գտնելով ժաւալած և ընտանի եղած էր

առ մերօն նախնիս՝ զլիսաւորապէս՝ այն պատճառաւ որ աղխարհագրական դիքովը այն լեզուն գործածող ժողովրդոց մերձաւոր էր, ու երբեմն նաև մարզ այն երկրին և իշխանութեան որուն վրայ Արգարներ կը տիրէին։ Հայաստանի առաքելցն որշափ ալ ՚ի վերնատան իր առաքելակցաց հետ լեզուաց պարզեն ընդունելուն հաւատանք, և Լամբրոնացւոյն հետ շտարակուսինք թէ և Հայոց մեծաց բասիքն վայելու զանս իւր յօդէր», բայց պատմական հաւատուիք մը շոնինք թէ աստուածաշոնչ խօսքերը ինչ լեզուով իրենց ընտանեցուած ըլլայ. և թէպէտ ուրիշ առաքեալք աւետարաններն ալ հետերնին տարին, Քրիստոսի խօսքին ու վարդապէտութեան հետ, բայց Թագէի համար նոյնը շենք կրնար ըսել, անմիջապէս յետ համբարձման Փրկչին երեւանով ՚ի Հայաստան, յորում ժամանակի դեռ աւետարանք գրի վրայ առնուած չէին։

Արգարու թղթպն մէջ որուն հեղինակն է արդէն մեզի ծանօթ դիւնադպիրն Լարուբնիս, հետևեալ խօսքերուն կը հանդիպինք ՚ի վարդապէտութեան Թագէի. « Զգիրս զոր ընթեւնուցուք յեկեղեցով ժողովրեան ասացի՛ զԱրարածս և զՊարպարէն և զՎէետարան. և զթուղթու Պաւղոսի զոր ետ բերել Սիմոնի Պետրոս ՚ի Հռոմվ քաղաքէ, և զՊործս առաքելոցն՝ զոր ետ մեզ բերել Յոհաննէն որդին Զերեդեայ յԵփեսոս քաղաքէ։ Չայն իսկ զայս զիրս ընթերցըլք յեկեղեցւով Քրիստոսի. և այլ աւելի քան զառաս մի ընթեւնուցուք. քանզի չկը ինչ յորում զբեալ զշմնարուութիւն, բայց ՚ի զիրս զոր ընկարարուք հաւասավք յոր կոչեցարուք։ Լարուբնեայ քրոց այ հաստուածը իրաւամբ եկամուտ կը սեպուի ՚ի հմտից, ուստի և անհարազառ. և այս կարծեաց յատնի պատճառը՝ ինչպէս ըսինք, այն ատեն նոր կոտակարանին և ոչ մէկ մտուցեա զրի առնուած շըրջանէր. և Թագէի յետ համբարձմանն Քրիստոսի ՚ի Հայաստան անմիջապէս առաքելութիւնն՝ վկայեալ է յԵւսեբեայ և յայլոց, և ՚ի տոհմային պատմըշաց։

Առ Ասորիս աւանդութիւնն է թէ Արգարու հրամանաւ՝ Թագէի կամ իր աշակերտաց ձեռնքով եղած ըլլայ հին կոտակարանին թարգմանութիւնն յասորի բարրառ։ Նոյն լեզուով չըսր այլայլ և իրարմէ տարրեր թարգմանութիւնք կան զրոց որբոց. և են թ. Փէշիտոս կոչուածը։ թ. Փէլպօսէն-Հերակլեան։ գ. Կիւրըթմանի անունը կրող թարգմանութիւնն. իր ձեռքով գտնուած և հրատարակուած ըլլալուն, և գ. Երուսաղեմին։

Հնագյունն ասոնց մէջ ըստ արևելագիտոց հմտից՝ է Փէշիտոսաթարգմանութիւնն. Արոյ չի գիտուոփի թէ ինչ կը նշանակէ այս անունն. ընդհանրապէս կը թարգմանուի պարզ կամ անպահոյժ, և հուանական կ'երեւայ թէ տորի այս թարգմանութեան պարզ կամ անպահոյժ կոչուերուն պատճառը՝ ուրիշ թարգմանութիւններէ զանազանելու համար է, որ յետոյ քան զայն յեօթանասից թարգմանութենէ կամ Որոգինեայ վԵցիշեանի վրայէն եղած են. որոնք աւելի յդկուած ու զարդարուն ու ձուլ և լեզուով եղած էին համեմատութեամբ Փէշիտոսայի, որոց ոճն աւելի անզարդ, բայց բնական և ընթերելագրոյն էր, և ասորի լեզուի հետևաղութեան օրինակ մը համարուած։

Փէշիտոսի թարգմանութեան հիշտ ժամանակը յայտնի չէ։ Հին կտակարանին թարգմանութիւնը ոմանքինշուան Սողոմոնի ժամանակէն եղած կը համարին։ Ասի կայ է Խնչու-հատ (Եհուատատ) Հատէտ քաղաքի ասորի եափսկուոսին (յոթերորդ կամ յիններորդ դարու ապրած) կարծիքը։ Սուրբ զրոց գժուարիմաց տեղուանքը

մեկնաբանելու դիմումիր յօրինած երկասիրութեանն մէջկըսէ թէ Հնգամատեանն, Յեսու, Դաստուրք, Հռութ, Սամուէլ, Դասիթ, Աւակը, Ժողովոզ, Երգերգոց և Յովկ' Յոզմնի ժամանակ թարգմանուեցան Տիրոսի Քիրամ թագաւորին խնդրանօք: Իսկ հին կտակարանին ասոնցմէ դարս մնացած զրբերը, — կը յաւելու նոյն եպիսկոպոս, — նոր կտակարանին հետ թարգմանուեցան Եղեսացոց թագաւոր Արքարու ատեն՝ ՚ի ձեռն Ադէէի և այլոց առափելոց: Ընդհանրապէս կը կարծուի թէ քրիստոնէական կրօնից առաջին դարուն կը պատկանի այս թարգմանութիւն, երբայսկան բնագրին փայէն եղած: Դժուարին է ենթադրելլ թէ այն հերբայեցաց գործածութեանն համար եղած ըլլայ, որ կամ իրք գերեալք և կամ առևելուրց պատճառաւ բազմնթիւ ասու անդ գրուած էին յԱսորիս և ՚ի Միջազգեստ: Վասն զի եթէ Հրէից համար ասկմանուած ըլլար, հաւանականաբար աւելի յարսանական՝ թարկումի ոճ պիտի ունենալոր՝ քան ճիշ և հաւատարիմ թարգմանութիւն մը ինչպէս է ասորին: ուստի և անշուշո ոչ Հրէից՝ այլ այն կողմերը գտնուող քրիստոնէից համար եղած է այն փոխազրութիւնը, և այն ալ ՚ի սկզբան քրիստոսական թուա: Երբութեան՝ Նոր կտակարանին թարգմանութեան մասը կը կարծուի թէ առաջին դարու երկրորդ կիուն կամ յառաջին քառորդի երկրորդին եղած ըլլայ յԵղեսիա կամ ՚ի Վերին Միջազգեստ: Այս մեջ հասած ամէն վկայութիւնք կ'ընծայեն զայն Ադէէի կամ իւր աշակերտաց: ոմանք եւս Արքարու թագաւորի, թէպէս և նախանական քրիստոնէութեան ժամանակէն մնացած ասորի գրուութեանց շգտնակրուն՝ գժուարին կ'ըլլայ որոշակի բան մը սահմանելլը: Սակայն հայ և ասորի պատմիչոց ոմանց մէջ գտնուած տեղեկութիւնն կրնան գէթ մասամբ լուսարանելաց յսնդիլը, որուն համաձայնին ՚ի մերցն մեծն Վարդան և յօտարաց Բար — Երբէոս երեքտասաններորդ գարու մասնագիրը, Մ. Բար — Գերասա որ մեռած է ՚ի սկզբոն տասներորդ գարու (913), իէշու — Տասա յիններորդին և Յակոբ եղեսացի յութերորդին (+710): Բար — Երբէոս և Բարգերաս՝ Եղեսաւոյն Վկայութեամբ կը հաստատեն իրենց կարծիքը. «Արժան է գիտել, կ'ըսէ Բարգերաս իր վեցօրէց մեկնաբանութեան գրոցը մէջ, որ երկու թարգմանութիւնք կան հին կտակարանի ՚ի ձեր ասորական լեզուի. յօրոց մին Փէշտոտա կը կոչուի, զոր կը կարդանք յեկեղեցւ. և հերբայսկանին փայէն եղած փոխաբերութիւն մ'է. իսկ միւսն եօթանասնից՝ որ յունարէնին փայ թարգմանուած է: Փէշտոտա կամ յերբայսկանէն եղածը, Արքար թագաւորին ժամանակէն է. ինչպէս կ'աւանդէ մեջ Մար — Յակոբ Եղեսացի թէ առաքեալն Ադէէոս և հաւատարիմ արքայն Արքար մարդիկ գրկեցն յԵրուածալէմ և ՚ի Պատեստին: որոնք հոն հասնելով թարգմանսկցին հին կտակարանը ՚ի հերբայեցաց լեզուէ յասորականն: իսկ եօթանասնից փայէն եղածը՝ երիսաիրութիւն է Պաւլոսի եպիսկոպոսի Թէլլա Մազապէթ քաղաքի »: Բար — Քիրասայ այս վկայութեամբ երկու թարգմանութիւնն ալ ՚թէ հին և թէ նոր կտակարանի ժամանակակիցք և իրարու մերձաւորք կը հանդիսաին: Եւ յայտնի է ՚ի պատմութեանց որ ինչպէս Հայք, ասանկ նաև Ասորիք ունեցած են իրենց թարգմանչաց գարը. այս տարբերութեամբ միան՝ որ վերջնինք երեք գարու կանիսած են քան զմեզ:

Քրիստոնէութեան առաջին դարերէն ՚ի վեր կայր ասորի եկեղեցին, որ ունէր իր յասուկ եկեղեցական պաշտամունքը, և սահմանակացական քաղաքական յարաբերութեամբն մեծ ազգեցութիւն մը Հայաստանի փայ, քանի որ այս վերջնոն իր բուն ազգային մատենագրութիւնն չունէր՝ մինչև ցակընաւորի կինգերորդ գարու:

Ասորի եկեղեցին այսպէս կերպաւորուած՝ հարկաւ պէտք պիտի ռմնենար նաև սուրբ Գրոց թարգմանութեան, և ամենէն աւելի և յառաջ՝ սուրբ Աւետարանին։ Բաց ասկէ, ընդհանրապէս ընդունուած աւանդութիւն մը մեզի կը սորվեցնէ, թէ սուրբն Մատթէոս իր աւետարանը շարագրած ըլլայ արամէտական ինգուալ, այլնքն այն լեզուով որոյ արդի ասորականն մէկ ձեւն կամ անոր մէկ բարբառն է։ Գիւրբթոն այս կարծիքն յայտնապէս վաւերացուցած է իր վեճուրիւնը՝ ի վերաց հին բարդականքին չորից աւետարանց յասորի լեզու կոչուած գրքին մէջ։ (Remains of a very ancient recension of the four Gospels in syriac; London, 1857).

Հինգերորդ գարուն սկիզբը կամ 'ի վերջը ըրրորդին, թէ օդորոս Մոպուեստացի, որ քաջածանօթ էր Փէշիստա թարգմանութեան, վասն զի ասորի էր ժագմամբ ասկմին, դիտել կու տայ որ երբեք որոշակի յայտնի եղած չէ թէ ովէ անոր բան թարգմանիչը։ Եթե շրրորդ դարուն վերըբը անծանօթ էր թարգմանիչը, ըսել է որ գարերով առաջ եղած պիտի ըլլայ այդ աշխատանքին ձեռք զարնողը, ապա թէ ոչ, իր անուան այդպէս անձանօթ մնալու ընականարար պատճառ մը չէր ըլլար։ Սուրբն Եփրեմ<sup>1</sup> որուն կենաց վախճանը ձիդ այն ատեն կը հոնդիպէր՝ յօրում և ծնննէր Մոպուեստացի, բայ ՚ի Փէշիստացի արիշ ասորի թարգմանութիւն չի ճանչնար. այլ զայն կը գործածէ և կը եթինարանէ։ Կը յիշատակեն դարձեաւ զայն սուրբ Մելիստա եպիսկոպոս Սարդիկեայ (160-170), և իրմէ գիշ յառաջ կամ ժամանակից սուրբն Հեթեփապատ առ Եւսեբեաց<sup>1</sup>։ «Յաւետարանէ անտի հերացեցոց և ասորոց. և առանձինն ինչ ինչ են նա մի ի լեզուէ հերացեցոց»։

Ուրիշ պարագայ մ'ալ որ կը ցուցընէ թարգմանութեան հնաթիւնը՝ այն է որ երկար ժամանակէ պակասէին յայնմ թարգմանութեան երկրորդականն կոչուած կոթուրկէ թաւղթք առաքեալականն։ Ինչպէս Պետրոսի երկրորդը, երկրորդն և երրորդ Յովհաննու, և թուղթն Յուղայի։ Ու եթէ արևելեան եկեղեցեաց՝ ասորունց, հայոց, մելքիտաց, յակովիկեանց, նեստորականաց և մարոնեաց անընդունիք էին այս սրբագրում գիրք, այլ վասն զի ասորական թարգմանութեան ատեն այս թըղթեան գեռ եւս ամէն տեղ Վստուածառըն գրոց կամնին մէջ անցած չէին. և յայլուուտ յայսնէ և որ եկեղեցւոյ կարծիք և որոշմունք անոնց վրայ յամի եղան, քան մնացած երեք կաթուղիկեացց. որովնոր կոսակարսնին զրշագրաց մէջ միշտ այս վերըններն կ'անցնէին, իսկ միւնքերն ժամանակ անցնելէն եսպը։ Ափկայ մեծ ապացոյ մ'է, ինչպէս ըսկնք, ասորական պարզ կամ անպամայթ կոշուած թարգմանութեան հնութեանը։

Կոտրական Փէշիստա թարգմանութեան մեծ յարդ մ'ալ իր ընթերցուածոց հաւաքազութիւնն է, որուն թերեւս սակագը կարենան հաւասարի. և հաւասականարար պայ այլ պատճառ մ'է մեր նախնեաց զայն նախնանիր ընելուն 'ի թարգմանութեան սուրբ գրոց։ Այս հարազառութիւնն արուինք է ոչ միայն լեզուին կազմաւորութեան և գրութեան որ աւելի մոտպաւթիւն կը պահանջէ. այլ նաև այն ընդհանուր մեծարանաց զոր կը վայելէր բովանդակ ասորի լեզուն գործածող ժողովը։ Պայմանը:

Կանխաւ այլուր առաջ երեած ենք Վարդապետի գրութիւնն առ Հեթեամ թարգանը Թագէր ընծայուած սուրբ գրոց թարգմանութեան վրայ. հոս երկրորդելլ աւելորդ կը համարինք<sup>2</sup>:

1 Պատմ. Եկեղ. Գ. իի:

2 Հայկական հրե ժամանակը. Բ. տալ. 152.

Հաւանական է ուրեմն ենթադրելը թէ Արգարու ընդունած, և ըստ աւանդութեան, իր հրամանաւ ասորական թարգմանութեան վերածուած սուրբ Գիրք՝ ծանօթ և գործածական եղած ըլլան նաև. Հայոց, որոց վրայ կը թագաւորէր, և որ ունեցաւ իր շարունակաթիւնն՝ մինչև որ յատուկ իրենց լեզուով ունեցան թարգմանութիւն մը: Այս վերջին դէպքին՝ ու Թափէի 'ի Հայաստան զարոն և քարոզութեան մէջ եղած միջոցը՝ յորս երկար գարերու միջոց մ'է. յորում մեր հայրենի հողայն վրայ ալ քրիստոնական կրօնը ունեցան և կրեցին իրենց հայած անք, ինչպէս նաև երկից ընդայուած վկոյից ու մարտիրոսաց ոչ աննշան թիւ մը. երբ այնչափ վոռ եռամ-դեամբ և զարմանահրաշ սրտով քարոզուած և ընդունուած չնորհաձիր երկնակրօն վորդապետութեան կառուցած տաճարաց և եկեղեցեաց աւերակներուն վրայ՝ հեթանոսական մոլեգնակրօնութեամբ միւսանգամ բարձրացան գից մեհեաններ և բագինք:

Ընդդիմամորտ կոիւ մ'էր՝ հեթանոս ու քրիստոնեայ կրօնից. խաւարի վերջին յոսահատ ճիզն լուսոյ դէմ: Զէր հարկ, չէր արժան տարակուսիլ թէ ովկ պիսի տանէր փափաքելի յաղթանակը:

Երեխարիւր և երկու թուականն էր Քրիստոսի լուսորեր ծննդեան:

Երկնապարգև և աստուածահրաշ թուական մը, Հայոց կրկին լուսուորութեան, երբ մթին ու մանահատ վիրապէ մը գուրս կ'ելլէր՝ Հայաստանի հոգեւոր կենաց լուսաւորիջը. մահուան արհաւորիքն իրմէ հեռացընելլով կենդանի պահուած սուրբն Գրիգոր՝ կը քարոզէր ու կը տարածէր զլոյս հաւատոյ, զյոյս անմահութեան, իր երկնաւոր վարդապետին Յիսուսի հոգեհրատ լեզուովը, պրտավն ու խօսքով:

Սուրբ հուսատոց 'ի Հայաստան քարոզութենէն ետքը, անոր աստուածահրաման պատուէրներն, խոստացած միխթարութեանց երկնարազդ ակնկալութիւնքն վառ պահէլու, և զայն յօժարական և յօժարափոյթ սիրով ընդունովաց սրովին ու մասց մէջ տեւական ընկելու համար՝ անհրաժեշտ հարկ ու պէտք մ'ալ կայր. — Աստուածացունց զիրըք ժողովրդեան ժամանթ ու ընտանի լեզուովը ընծայել իրեն:

Սուրբն Գրիգոր Լուսուորիչ, Հայաստաննեաց աստուածակութ ծնողն, սրտին՝ արեամբ ու հրապարակուագործ վարդապետութեամբ՝ այս սուրբ հաւատոց ուսուցիչն ու վարդապետ, չունեցաւ առիթ ու պատեհութիւն՝ պրտազիր ու աստուածաշտունց տա: Ից հայկակոն թարգմանութեամբ օժտել այն ազգն՝ որուն փրկարոց լուսուորութեանն համար իր արիւնն ու կեանքը տուաւ: Հայաստան աշխարհ՝ իր ատենին ունեցած քարգավական զիրքն և ուսումը, և թէրեւո նոյն խոկ սուրբ հայրապետին անձնական հանգամանք՝ պահաւ տոհմիւն և արեամբ՝ ստար ըլլալով այն ազգին՝ որուն մէջ անձնականուն պիտի մնար իր արգեսամբը՝ կրնան արդելք եղած ըլլալ իրեն զայն 'ի զլոյս տանելու: Վասն զի ինչպէս յայտնի է 'ի պատմութենէ, Անակայ պարթեւազին ծնունդ, անդուտին 'ի մանաւկ ախոցն փախստական և հարածուած, սնեալ և վարժեալ առ Յայն, ու հաւատոց հետ նաև զնորհս ձեռնա զրութեան անոնցմէ ընդունած, բաւական սեպած պիտի ըլլայ անդուչ ազգին արգէն ծանօթ և ընդունելի թարգմանութեան վրա ընդելացընել նաև զյոյն՝ զայն զիտցողաց և հակացողաց համար. մանաւանդ որ՝ ինչպէս զիտենք, որչափ ալ հայ ազգն ուներ յայնժամանք իր բարգուած ծաղկեալ լեզուն, այլ զայն գրտուր պատմունաւ ու կերպարանօք ներկայուցընելու էական ու զիխաւոր տարրը կր պակսէր՝ հայկական յատուկ և ազգային նշանագրաց կամ բոլորովին բացակայութեան և կամ անոնց անկատարութեան պատճառաւ:

**Այս պակասութեան համար՝** բռնադատուած էր քրիստոնէութիւնն ընդունող ու սիրող հայ ազգն՝ փրիսանուկ իրեն սեպհական լեզուով սուրբ գրոց թարգմանութիւն մը ունենալու, ուրիշ երկու օտար իրեն ծանօթ ու գրացի ազգաց թարգմանութեանց կիրառութեամբն գույ ըլլալ առամանակ մը:

Կանիցեցինք ըստ թէ ասորի ժողովուրդն ունէր անդուսին յառաջին դարէ քրիստոնէութեան իր յատուկ եկեղեցական պաշտամունքը, որով նաև զպատարագամատոց գիրս: Անկարելի ըլլալով ենթադրել քրիստոնէական հաւատոց բարգաւաճանք և յարատև չարունակութիւն՝ առանց սուրբ պաշտամանց, անտարակուսեի է որ առաքեան թագէսու ասորի լեզուով առանդուժ ըլլայ զան, և անշոշա զայն սահմանող նուիրական գրոց մէջ ամենէն աւելի պատուառելի հնութիւնն ունեցողը՝ ու Յակոբա առաքելոց Տեառներոր սուրբ և մեծարեալ անունը կրող Պատարագամատոյցը, որց փայտ յետոյ գարձաւալ տոփթ պիտի ունենանք խօսելու. վասն զի այդ պատարագամատուցին ալ հայկական թարգման թիւնն պահուած է 'ի մեր մոտենագրութեան, և հասած մինչեւ առ մեզ. բայց թէ որ գարուն կը վերաբերի այդ փրիսագրութիւնն, բրէ և որշոփ ատեն առանդ է անոր գործածութիւնն, ինչպէս նաև խափանումը, չենք կրնար որոշակի բառ մը ըսել: Ցիցցընենք միայն որ անոր հետ կը գննենք նաև արիշ պատարագամատոյցը մը հետևեալ խորագրով: « Պատարագ Աստուծով՝ սրբոյ հօրէն մերոյ Գրիգորի լոււսուրիք »: որ հաւանական ենթագրութեամբ սրբոյ Լուսաւորչին ձեռքով՝ անշոշա յես ձեռնադրութեանն 'ի դարձին 'ի կեսարիոյ թերուած է, և 'ի ժամանակին յոյն եկեղեցւոյ մէջ արդէն 'ի գործածութեան էր: Ասով կ'ըլլան երկու պատարագամատոյցը, մին յասորի եկեղեցւոյ և միւսն 'ի յունականէն փրիսագրուած առ մեզ և հարատարակուած, և ըստ աեղոյ և ըստ ժամանակի 'ի կիրառութեան առ կինսն մեր: Ես որովհետեւ հինգերորդ գարու պատուիշք կ'աւանդին թէ սուրբ գրոց ընթերցուածոց համար յեկեղեցի՛ սուրբ և յոյն իջաւներով վարուելու սովորութիւնն ունէին մերքն, անտարակուսեի կրնայ համարուի թէ պատարագի պաշտամանց մէջ գործածուած երկու լեզուաց համաձայն կ'ըլլային նաև ընթերցուածք 'ի սուրբ գրոց, մերթ յասորին և մերթ 'ի յոյնն:

Սակայն այդ երկու լեզուաց ընթերցմամբն ալ չըր օգտուեր ժողովուրդն, վատաւելով մոնաւանդ թէ հոգեոր և թէ ազգային շահուց տեսուկէառվ. և այս երկու վիճան ող, — ինչպէս սորիշ տեղ ակնարկեցինք, — ծանր ու գժենդակ էր հայրենիաց հոգեորական ու ազգային շահերով տոշորոյ աստուածամերձ ու հայրենուսէր սրափ և ուգոց: Երկու լեզուն ալ ունէին իրենց գոռ և ընդդիմանարա թշնակիք. Յոյնք՝ զատուականն կը ջանային վանել մերժել ու ատելի ընել Հայոց, զի արդէն անոնց երկրին միոյ մասին տիրողք, միւս մացածին վրայ ալ կ'ուզէին իրենց ազ. դեցութիւնը զօրացընել, և անով ալ աւելի ընդարձակել քաղաքական իշխանութեան սահմանը օգնութեան նպաստից խստմանց մէջ դիւրաշարժք և յօժարափոյթք. գործադրութեան միջոց՝ կարծես թէ քաղաքային նիւթական շահէն զատ ամէն բան կը մոնային, բռնագատելու համար զազգն որ իրենց իշխանութեան ըժոյն ատկ խսնաբհի՝ մոտադիր զոհելով իր և հայրենեաց ինքնօրինաթիւնը: Այսպիսի քաղաքականութեամբ վարուեցան Յոյնք մինչեւ Ծնորհաւոյ ատեններն և անկէ ալ անդին: Խակ Պարսիկը, բռունք և մոլնախսնանք, քաղաքական իշխանութիւննին ընդարձակելու մոտածութենէն ու փափառէն զատ՝ կրօնական դիտում մ'ալ ու-

Նէին . խզել վերցընել այն կապն որ զՀայս արևելեան կայսերութեան ու անոր քաղաքագիտութեան հետ միացընելու կամ անոր հաւատութիմ պահելու գօրաւոր միջոց մ'էր . բնաշինջ ընել զքրիստոնէութիւն , եկեղեցեաց աւերակներուն վրայ ատրուշաններ ու կրակի տուներ բարձրացընելով : Այս նպատակին հասնելու համար հարկ էր ընտելացընել իրենց պարսիկ թղուն , և ծառաղել զայն ընդ բովանդակ Հայաստան . և ուր հարկ ըլլաց՝ ամէն բռնական և անիրաւ միջոց գործածել յայն և ասորի լեզուն և գպրութիւն անկէ տարափել ընելու : Այս միջոցին յաջողութեանը մէջ կը յաւսային տեսնել իրենց յազթանակը . Փառափրական ձգտութեր և տենչը , նոյն իսկ հայ հողայն վրայ բնակող՝ բայց հայրենաւանդ արիսւթիւն , սիրու և անձնանուիրութիւն չկրող ազգայնոց , Մերուժաններու , Վասակներու և անսնց նմանեաց՝ ծածուուկ կամ յայտնի գործակիցք , աստոր և օգնական ըլլալ կը խոստանային անսնց ջանից : Սրտերնուն հետ' նաև ձեւքն ու արդը անարդ գնով կը վաճառէին , հայրենեաց կրօնքն ու ազգային իշխանութիւնն տապալելու :

Հայաստան հայրեննեաց՝ կրօնական ու քաղաքային այսպիսի ճգնաժամկ մը մէջ սրբոյն Գրիգորի աթոռոյն վրայ բազմած կը ցուցընէ պատմութիւնն զմեծն Սահակ Պարթեւ . ոչ լոյն երկնապարգև սիրու ու հոգի մը , այլ մունաւանդ աստուածափնամ տեսչութիւն , ամենափայլ արեգակն մեր ազգային եկեղեցական տարեգրութեանց մէջ : Իրեն ու իր անմահանուն ամողակիցին սրբոյն Մերուժակայ , և զիրենք քաջակերող ու խրափուսող մեծին Վառաշապիշոյ արքային ջանից արդիւնք է՝ Հայաստանի այսպիսի մահաթմիր բռնադատ նիբհմանէ մը արթեննալը , և այն՝ այնպիսի եռանգեամբ , փառօք և արդասեզք , որ աւազ , խիստ սակաւառն եղաւ :

Տեսան ասոնք , կորովարիք աշշեր և հեռատես միտք , թէ ասօրի ազգ , լեզու և գպրութիւն արդէն իրենց ժամանակն անցընելու վրայ էին . ալ ոչ անսնց գպրութենէն և ոչ ալ քաղաքական գիրքէն իրենց հայրեննեաց ապագային համար ակնկալութեան տեղ մը մնացած չէր . հարկ էր՝ իրենց երլիքն ու աշխարհին վրայ կը ռուոզ երկու ազգերէն նախ առաջին պարսիկ իշխանութեան օր ըստ օրէ աւելի սպաննական գիրք մը բռնող ոյժը խօրտակել ջախջախել , ու անով սրբութեան կրօնից վասնզը հեռացընելքն ետքը , յայն գիտութեամբ և գպրութեամբ այլ եւս պատքեալ . Կարօս չթողուզ ազգ մը՝ որ իրենց արիւնն , սիրու ու սէրն էր . և առ այս հարկ էր գիմել և մերձենալ առ յայն այնպիսի չափով և խոհականաթեամբ՝ որչափ իրենց անհրաժեշտ օգտութը կը պահանջէր . ազգային երիտասարդութիւնն հելենացընել մարզով , հանճարով ու գիտութեամբ , և հայ պահել սրտին և հոգւով :

Թէ որշափ աշխատեցան այս բարեկործ գիտմանն հասնելու՝ մեր նախընթաց երկասիրութեան <sup>1</sup> մի մէջ արդէն յիշատակած ենք համառօտիւ . Ղանալով մի առ մի , որշափ գիտցեր ու կրցեր ենք հաւաքել 'ի սրբութեանց և 'ի յիշատակարանաց , թուելավ իրենց մեծ և սուրբ հոգին ու սիրով կրող արժանաւոր աշակերտները , ու շիմ , երկարողի , ու մեր հայրեննեաց ու իրենց վարդապետաց անմահական պարժանք հինգեկարդ գարու ուսումնաւոր և ուսումնախնդիր երիտասարդութիւնն :

<sup>1</sup> Տի՞ն Պատմութիւն էրն հայկական գպրութեան :

Գ. ԱՌԱՋԻՆ ԹՄՐԳԱՐԱՆՈՒԹԻՒՆ Ո. ԳՐՈՅ

Խ Հ Ա Ց Լ Ե Զ Ա Կ Ե Ց Ա Ս Ո Ր Բ Կ Ա Ն է

Ազգին լրուրեան աղերսը առ Ա. Սահմակ վասն բարգմանուրեան Ա. Գրոյ ՚ի նայ չեզուս — Սուրբ Սահմակ ձևար կը զարձեկ այս աշխատանքին յատրականեւ : — Ո՞յ մաս սին բարգմանուրեան նույիրեց նա իր նախկին աշխատանքը : — Սրբոյն Ծննդովայ և երիցադյն աշխարհաց գրքանուրեալը : — Հանգամանք նախկին բարգմանուրեան :

Հայրենեաց փոսնգը վերտաս էք. հարկ էք փութալ ՚ի դարմանն :

Նշն բարենշան ո նախանձելի գորոյ պատմչար մէկը, Փարաեցին Ղաղար, օլք տուշարժ ու տնինուանալի տեսարանի մը կը հրափրէ զմել. Անոնցմէ գրեթէ տասնըշորս դարու հետո մասցզաք, շեռ շենք կրնար անկարեկիր ու անարաօսր նկատել զայն :

« Ժողովեալ ամենայն աւագ քահանաք ախարհին Հայոց, հանդերձ երանեթաւն Մաշթոցի, և ամենայն նսխարարք աշխարհին Հայոց և մեծամեծ տանւատարք՝ առ թագաւորն Հայոց Վասմակուս, և հանդերձ թագաւորաւն ոկասն աղաչել զուրբն Ամահակ արկանել զանձնն յախսառութիւն հոգեոր, և թարգմանել զատուածայունշկանաւնն ՚ի յոյն չելոյ ՚ի հոյ բարքաւ : Եւ դաք աւագ քահանապիցն ասէին ցուրբ քահանապատեան, թէ Եթե որ կամքս առաջի քո, հանդերձ երանեթաւն Մաշթոցի, զոր զարթոյց աստուածային շնորհն ՚ի ցանկութիւնս յայս, կարգել զվազընշուաց գրեալ շարսպիրս տառիցն, զորս ու սրուցէր հոգացեալ արկանել ՚ի կիր. ոյլ ասորի մեծաման և անօգաւոտ ուսմանըքն ալխատեամբ յոխորտ, յորոց բազմութիւնք ժողովուոց ունայն և թափուը հրաժար եալք գնային յեկեղեցւայն. և ուսուցիչքն հանելով յոգուու և հառաջելով՝ զղանային զանոտի ջանս իւրեանց, յորում ոչ զոր յաւսամասէր ժողովելոյն տեանանէին օգտեալ ՚ի վարդապետութենէ հոգեոր խըրանուուցն, որ է կերակուր և պարարութիւն իւսասանախնդիր անձնաց. մինչ գտաւ զիր, և յանդելով Քրիստոսի եկեղեց յանումն տակաւին զօրանոյց Համայն և զայս վասա տակայս կարգուումն, և բոյինդ առաքինութեանդ գիտութեամբ եղիցի, և կասարեաւ : Այդ որպէս և սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ ՚ի խոչտանկանուն անմասա աջով Հզօրին ՚ի լուսաւորութիւն գիտութեան ախարհիս Հայոց տոււաւ, պահ հեալ նորհեցաւ և քեզ նորին շաւաւիդ վիճակ ժառանգութեան պայծառութեան պաշտամունս այսորիկ, ակիզըն առնել գործոյ մշակութեան այսմիկ, և լինել նմանող սուրբ նախնդնդ քում, որ յանդիտութենէ ՚ի ճշմարիտ աստուած գիտութիւն առաջնորդեաց ախարհիս Հայոց : Այս և գոյ յանօգաւոտ մուրզարանութենէն ՚ի սոսյդ հոգեահ եկեղեցարդ բանաւորութիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի . նույ զայս կասաւթիւնս զայս մասցեալ ՚ի սուրբ նովինեացն քոց, զոր պահեաց քեզ Աստուած. զոր ոչ ումեզ այլում ՚ի Հայոստան ախարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յայդպիս գործ մեծ : Վասն զի և ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդշափ արուեստաոր ուսմանցդ, որպէս և քեզ տոււաւ զօրութիւն ճար-

տարութեան 'ի վերին օգնականութենէն, յաղագս քո տռաքինասէր և պարկեցտ վարացդ, որ նմանեալ ծզրտապէս օրինակեցեր 'ի քեզ զվարս երանելոյ հօր քոյ Ներսիսի :

Այսարհապաղատ թախանձանք մ'էր, բովանդակ ազգի ընդ հանրութեան կարա տութիւնն ըսեի ընող ձայն՝ եկեղեցական ու աշխարհական աւագութեան և բազմութեան ժողովրդոց, միասիրաք և միախորհուրդը, խառնելով իրենց աղերսանաց հետ նուե զարտասուս. յորում մի է ամենուն նպատակը, զօր կորիւն, Փարպեցի և Խորենացի միաբան կ'աւանդեն: Հայկական այրութենին՝ արդէն մտածուած և յօրենուած կողմիներպութիւնն գեղեցիկ պատեհ և առիթ մ'էր իրենց ինդրուածոց կատարումը փութացընելու, և սուրբ հայրապետին աշխատանքը դիւրին գործելու, Այշափի ու այսպիսի իրաւացի թախանձանաց չէր կրնար անլուղ երևնալ աստուածասէր ու հայրենեաց բարույն փափաքով վառուած սիրտը: Մատղիւր յանձն առա իրեն եղած առաջրկութիւնը. ու անով ամէն իրեն գիմող սրտերը սփափեց ու քաշուիրեց. և վոսնդն՝ զոր ինչպէս ըվնկք, վերահաս և սպառնալից կը նկատէին ոչ եւս այնպէս խիթափի և անհրաժեշտ կ'երևնար:

Բայց այդ անթիւ բազմութեան մէջ՝ ամենէն աւելի սփոփուածն էր Մեսրովպայ սիրտը. իր մէծ զիւտին, և անոր համոր կրած ամէն տափնապներու, ճգանց ու վաստակոց լիուլի հասուցումն ու վարձքը արդէն ընդունած կը սեպէր:

Սակայն սուրբ Գրոց ստուգահաւատ և ամենայն վստահութեան արժանի յոյն որինակ մը գտնելն 'ի Հայաստան՝ զիւրին չէր. արդէն ըսինք թէ Մերուժանայ աղքագակա կրից ու սուրբ կրնից դէմ ունեցած ատելութեան զոհ եղած էին. անոնց 'ի խնդիր ելլեւ, մինչև 'ի սահմանն Յունաց և 'ի կայսերանիստուն բիւզանդիոն խնդրակը յղել՝ ժամանակի կարու էր, ուր ազգին պէտքն՝ անհամբեր ըրած էին զամենելուան. օր մը, ժամը մը յառաջ իրաւացի ցոնկութիւնը կատարուած տեսնելու փափաքնագով վատուուած էին ամեն եղեւան: Այդ պատճառաւ սուրբն Սահակ հարկ սեպէց որ ասորի թարգմանութեան մը փրայէն սկսի իր աշխատութիւնը. որովհետո ինչպէս քիչ յա: աղ առիթ ունեցանք յիշելու՝ հաւատութեամբը մեծարոյ ու. ազգին արդէն ընդունելի թարգմանութիւն մ'էր այն: Կը վկայէ Խորենացի. « Դառնայ (Մեսրովպ) և գտանէ զուրբն Սահակ՝ 'ի թարգմանութեան պարապեալ յասորույն՝ յոշ լինեց յունին: Վանզի նախ 'ի Մերուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ 'ի բաժանել զախարհս Հայոց՝ շոտարին պարովկ վերակացուքն յոյն ուսանել գարութիւն ումեք յիւրեանց մասին, այլ միայն ասորի »:

Սուրբ կամ աստուածայուն Գրոց որ մասին թարգմանութեան նուրիեց արդեօք մեծն Սահակ իր նախակին աշխատանքը: - Հաւանականարար անոր՝ որուն աւելի կարօտ էր ազգը. և այդ մէծ կարուութիւնն իսիստ լաւ բացարեց հօսասէր հօփեկան պատիւածին թէ ինչպէս եկեղեցւոյ պատամանց ընթերցուածոց հօգեկան միսիթարութիւնն գորկ կը մնար ազգը. զի թէպէտ և յոյն լեզուին դարութիւնն և ուսում՝ 'ի Պարսից կրած հայածանքովն հանդերձ գեւու եւս ազգին մէկ մասին ծանօթ էր, բայց ոչ մեծամասնութեան. որով շատերը, - եկեղեցեաց մէջ գումարուած խուռն բազմութիւն, - լուղ միայն կ'ըլլային աստուածային բանին՝ առանց անկէ օգուտ մը քաղելու: Բնական էր՝ որոյն Սահակայ առաջին փոյթն ու շանք պիտի ըլլար, - զի զայն կը պահանջէր իր հովուական պաշտօնը, - այդ հոգեւոր վնասուն դարման մասուցանել: Աշուշա զայս կ'ուզէն ակնարկել սրբոյ կորեան հետևեալ խօսքերը. « Երանելոյն Սա-

համայ, կ'ըսէ, զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ յունական բարբառոյն 'ի հայերէն դարձուցեալ ու Ուր եթէ ուզենանք հնթադրել դրչի վրիպակ մէջ, և ինչպէս հաւանականադոյն և ճշգրտագոյն կրնայ համարուիլ, յունական բառը ատրուկանի փոխենք, կրնանք հետևեցրնել թէ որովհետև եսիսկոպոսաց և եկեղեցւոց պաշտօնէց տապահան ու գտնգատը զիսաւորապէս անոր համար էր որ եկեղեցական պաշտօնմանց մէջ կարդացուած գրեթէ ասորի և յաւնական լեզուով ըլլավնուն, ժողովրդեան մէջն շատին անիմանայի որով և անօդուու կ'ըլլային սուրբն Սահման զեկեղեցական գրոց գումարութիւնն, այս մինն եկեղեցական պաշտօնմանց ատեն կորուգացուած գրեթէր փոթոց թարգմաննել 'ի հայ բան ե 'ի զիր: Բայց եթէ մէջն շատնու յանձն կորեան խօսքն այդ փոփոխութիւնը՝ և թողու այնպէս, մեր ենթադրութեան բոն իմաստոին հակառակութ շլլար, միայն փոփանակ յասորականէ 'ի յաւն եղած կը համարի թարգմանանթիւնը:

Սակայն այդպիսի մեծ ձեռնարկ մը ուուրբ Գրոց ամրով՝ թարգմանութեան, լոկ անձի մը համար ժանր էր և գժուարին աշխատանք, մանաւանդ գիսաւորելը որչափ կարելի էր 'ի սու գ ժամանակի, ինչպէս կը պահանջէր ազգին և Հայաստան եկեղեցւոյ կարօտութիւնն: Հարկ էր նաև այլց գործակցութիւնն. և այս վախճանաւ գումարեցան աշակերտոց որք արդէն հաշականուն են իրաւամբ մեր ազգային մատենագրութեան պատութեան մէջ, թարգմանիչը անունով. և որոց կը պարտիմք մեր գրպարթեան մեծագոյն և ազնաւագոյն մաս մը: Ծանօթ է մեզ դարձեալ՝ թէ երկու դասու կը վերաբերին ասոնք. ունանք անմիջական գործակիցք և աշակերտոք արքոցն Սահմակայ և Անորովպայ, և երիցագոյնք և յառաջադէմք սեպուած իրենց աշակերտաց մէջ և այլք կրստերք կոշուած, որնք մասամբ այս վերջիններուն ձեռքին տակ և տուննորդութեամ կրթուած էին: Սուրբ Գրոց թարգմանութեան մէջ աշխատուկցութեան գլխաւոր արդիւնքն երիցագունիցն էր. ինչպէս միաբան կը վշկացն Կորին, Փարուցից և Խորենացի: Միայն այդ պատմուշաց խօսքերուն մէջ երկրայութեան մասն որ մեզի ընդ առաջ կ'ելլէ յանմ է թէ սրբոցն Սահմակայ և Անորովպայ՝ և իրենց ասկակերտացն 'ի թարգմանաց այտի որոց կը վերաբերի սուրբ գրոց թարգմանութեան այս կամ այն մասը. զի կամ համարակարար՝ կամ մերթ եւս իբրու հակառակ երևոյթ ունեցող խօսքերով կը թուին աւանդել՝ մեզի համար մեծապէս հետաքննելի այս կէտը:

Կարելի եղածին չափ ասագոյն իմեւամուտ ըլլալու համար՝ այդ յիշուած երեք ժամանակակից անձանց արդէն ժանօթ և շատ անգամ մէջ բերուած խօսքերը միւսնագամ ներկայացրնենք ընթերցողաց:

ԿՈՐԻՆ. « Հրաժարեալ (սուրբն Անորովպայ) յեպիսկոպոսացն սրբոց հանդերձ օգնուինով իրովք իմաներ՝ 'ի քաղաքն Սամաստացոց, յորում մեծապատի իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր. և անդէն 'ի նմին քաղաքի զրիշ ովն հելլենուկան դպրութեամբ Զափանոս անուն գտեալ... 'ի թարգմանութիւն զառնային հանգերձ արսմբէք երկուք աշակերտոքն իրովլ, որոց առունենոյն Յովհան անուն կոչէին՝ յիշեղեցաց գաւառէն, և երկրորդին Յովհանէ անուն 'ի Պազմանական տանէն: Եւ եվել սկիզբն նովի յառակացն Սոյումնին, որ և 'ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեան լննծայցեցուանէ լինել ասելով եթէ ցանացել զիմաստութիւն և զիբառաւ, իմանալ զրանոս հանձնարց: Ուր և գրեցա ձեռամբն այսորիկ գրչի: Հանգերձ ուսուցանելով մանկուն գրիչս նմին դպրութեան ».... —

« Ի ձեռն առեալ սյունէետև աստուածաբործ մշակութեամբ արուեստն՝ ի թարգ մանել, ի դրել և յուսուցանել, մանսաւանդ հոյեցեալ՝ ի տեառնաբարբառ հրամանացն բարձրութիւնն, որ առ երանելին լուսէս եկեալ, վասն ամենայն իրացն եղելոց. յաստուածելին պատկամանցն բարձրութիւն աւանդելոցն՝ մատենագրել առ ՚ի պահեատ յափուեանցն որ գալոց էին . . .»

« Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհո Հայոց անպայման պահելի լինէր, յորում անկարծ ուրեմն օրէնսուուց Մովսէս մարգարէական դասուն, և յառաջազէմ Պաւոս բրւանդակ առաքելական գնդաւն, Հանդերձ աշխարհակեցոց աւետարանաւն Փրիստոսի, միանդամայն եկեալ հասեալ ՚ի ձեռն երկուց հաւատութեցն հայաբարբառաք Հայերէնախօք գտան . . . Որ և կրտան իսկ միւնք եկեղեցուց՝ միջամուխ ձեռւամբ զգործ աւետարանչոց՝ Փրիստոսի կործել. գումարել ՚ի կողմանն, ՚ի գաւառու, ՚ի տեղին տեղին Հայաստան ազգին, դաս զատակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցն ՚ի կատարումն գիտութեան, բաւականն և առ ՚ի զայլն զեկուցանելոյ » . . .»

« Եւ յորժամ այսպէս ընդ ամենացն տեղիու լի առնէր զսուրբ աւետարանն տեսարն, և ամենեցուն զգուշոցուցեալ զկենաց ճանապարհն փարելոյ, խորհուրդ առնոյր այնու հետև վսոն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ թագաւորին Հռոռմոց. Եւ փոթացեալ զնայր հանդերձ աշխերտօք բազմմաք, անցանել ՚ի կողմանս Յունաց. և վսոն առաւելագոյն բարեգործ համբաւոց՝ յառաջատցոյն զնմանէ անդ ՚ի հիւսիսական կողմանց հռչակելոց, առաւել միամստութեամբ ընտաներար յեպիս կոպուաց աշխարհին և յիշխանաց և ՚ի գաւառուականացն պատուեալ, մանաւանդ ՚ի սպայապետէն աշխարհին որ անուանեալ կոչէր Անատոլիու ՚ի մուս ճանապարհին. և զիրս առաջի եղեալ զրով ցուցանէր կայսերն, որում անուն թէողոս կոչէին, որ զի Արկադու կայսեր. ուստի և հրաման ելանէր, վայելուշ մեծարանօք զսուրբն Ակումիտ անուն կոչելոյ » . . .»

« Իսկ նորա զբազմութիւն աշխերտացն տարեալ ՚ի քաղաքն Մելիթինացւացն, յանձն առնէր սրբոց եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոն կոչէին. և զիստուոր աշխերտացն թողցր զայն որում Ղեւոնդէն կոչէին, այր հաւատուրիմ ճշմարտատէր: Եւ առեալ երանելոյն զգուստուական եպիսկոպոս Դիրէանաց, որոյ անուն կոչէր Գինթը, և սոկաւ յաշխերտաց անտի, և եմալ յանարլոյն դիմոսական և բազում պատիւ գտեալ՝ հասանէին ՚ի թագաւորակաց քաղաքն կոստանդինական, զորմէ իսկոյն պատմէին յարբունիսն. և մտեալ առաջի պատուական աթոռուցն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն, և հայրապետին սրբոց կաթուութիկոսին աշխարհամուա դրանն, որում Ստորիկոս կոչէին. յորոց և գտեալ չնորհս, հրամայեալ լինէր ժամանակս ինչ անդրէն ՚ի տիեզերական քաղաքին մեծարել դարմանօք կարգելով յեկեղեցւոյն և յարբանեաց և ՚ի պատուական իշխանաց քաղաքին:

« Եւ ասա յետ Պասեթին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյից հանդամանս . . . և ընկալեալ ողլոյն յեկեղեցւոյն և յերևեի իշխանացն քաղաքին և ամենայն իւրացնովքն յաջողեալք՝ եւսանէին ՚ի գեոպակս ՚ի կառու արբունասուրու Եւ մեծաւ շոով և բազում վայելութեամբ ունէին զնմանպարհն արքունականս, և ամենայն քաղաքացն պատուհելով, ՚ի քաղաքին պայցտառագոյն երևէին. և մեծամեծ պարգեւս գտեալ, գային հասանէին ՚ի ժամագիր կողմանս. և անդէն վազվազակի պատահեալ հետապետին Հանդերձ սակերտօք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերտ կայսերական նշանօք, փութայր վազվազակի զհամանն կատա-

բել. և հրեշտուկու արձակեալ այնուհետեւ 'ի գտառառ կէս ազգին Հայոց՝ յիշխանութեանն կոյ եր, բազմութիւն մասնկառաց ժողովել, և նոյին ունիկու կարգել 'ի սրատեհագոյն տեղիս, յոր և երանելին զվարդապետութիւն իւր 'ի գործ արկեալ, և ժողովելոցն քաղցրացուցանէր . . . . .

« Յետ այսօրիկ աշ եղեալ երկոյունց երանելեացն զիւրեանց ազգին զգպրութիւն առաւել յարգել և գիւրացուցանել, ձեռն 'ի գործ արկանէր 'ի թարգմանել և 'ի զբել մեծն խաչակ ըստ յառաջազգութեանն: Որոց գարձեալ գէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն յուղորկել 'ի կողմանն Ասորոց 'ի քաղաքն Եղեսուցաց. զՅուսէփ . . . և երկրորդն Եղնիկ անուն՝ յայրաբաժեան գաւառէն 'ի կողը դեղջէ, զի յասորական բարբառոյ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս. Հայերէն զբեալս դարձուցեն:

« Իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցանն՝ և կատարեալ զհրամանն, և առաստուկան հարսն առաքեալ անցեալ գնային 'ի կողմանն Յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք՝ թարգմանիչը կարգէին ըստ հեղինական լեզուին:

« Ապա յետ ժումանակ ինչ ընդ մէջ անցելք՝ գէպ լինէր սմանց եղբարց 'ի Հայաստան աշխարհէ դիմել լինանել 'ի կազմանն Յունաց, որ և Ղեւանդէս առաջնոյն անուն էր, և երկրորդին Կորինս. և մասուցեալ յարէին յԵղինիկն, իրեւ առ ընտանեթոյն մնջնդակից 'ի Կաստանինական քաղաքին, և միաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն՝ զինդիրն վճարէին: Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուք գրոյն, և բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, և Նիկիոնական և եփեսոսական կանոնով գային իրեւելով յաշխարհին Հայոց. և առաջի զնէին հարցն զբերեալ կտակարանն եկեղեցւոյ:

« Իսկ երանեւոյն Սահակայ զեկենեցական քրոց գումարութիւնն կանխաւ յունական բարբառաց 'ի հայերէն դարձուցալ, և բազում եւս զհայրապետոց սրբոց զմշարիտ գիմաստութիւնն, դարձեալ յետ այնորիկ առեալ՝ հանդերձ Եղնական՝ զյանալագոյն յյանկարծագիտ զիւութամակի թարգմանութիւնս հաստատէր ճշշմորիտ օրինակք բերելովք, և շատ եւս մեխնութիւն քրոց թարգմանէին»:

**ՓԱՐՁԵՅՑ.** (Վ. Սահակ) « Կամաս որ յօժարութեամբ եւս զանձն 'ի գործ պանծացեալ յԱստուծոյ քործակցութիւնն, որ ես նմա զայսպիսի չնորհ առաւելապէս զիտութեան, և անվեհեր ջանալով զցայդ և զցերել՝ թարգմանեաց զկուտկարանն ամենայն զիսուցեալս նշարիտ մարգարէւոք 'ի սուրբ Հոգույն. և հաստատեալ կնքեալ երջակի առաքելովքն զնորց կտակարանացն զրուաւոք և զկենաստուք քարոզութիւնս նովին հոգեւով, Եւ տարեալ 'ի զուրի սուրբ հայրապետին Հայոց Սահակայ զգաք մեծ հոգեւոր վաստակոցն, կարգեցան վաղվազակի յայն հետէ դպրոցը հօտին ուռմանց. բազմացան գաւոք գրչաց, ելեւելս տռնելով զմիմեամբք պատասխնկ զարդարեցան սուրբ եկեղեցւոյ» . . .

« Պայծառացան եկեղեցիք, շուք առին վկայարանք սրբոց, միշտ ծազկելով 'ի նոսա ավատ կտակարանաց ընծայիւք . . . Եւ զի միանդամայն իսկ ասացից ըստ ամսի սուրբ մարգարէին Եսայեաց. թէ բայս երկիրս ամենայն Հայոց՝ գիտութեամբ Տեառն 'ի հոգեւոր վտակաց սուրբ վարդապետին Սահակս, իրեւ զիսրու բազամն որք ժամանելու զովով» . . .

**ԽՈՐՆԱՅՑ.** (Մեսորակ) « Բոկդյոն 'ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդարար սկզբանելով յԱռակաց, զրովանդակ քան և երկու յայտնիսն և զնոր կտակս յեղուզ 'ի հայ բան. նաև աշտակերտք նորա Յովհան Եկեղեցացին և Յովսէփ Պալանցի, մի-

անգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանել տաղով իւրոց մանկագոյն աշակերտացն... Եւ վերակացու թողեալ զաշակերտ իւր զՅավաթան, միանգամայն և քահանայշ կացոցեալ դրանն արքունի, ինքն դառնայ 'ի Հայոց, և գտանէ զմեծն Ամհակ թարգմանութեան պարագեալ յասորւոյն, յոչ լինելց յունին:

« Ապա եկեալ և առեալ ՄԵԿՐՈՎԼԱԿ և մեծին Սահակայ զնոյն աշակերտոս, զՅով մէֆ և զմիս ընկեր նմին 'ի Կողը գեղջէ՝ որում անոն Եզնիկ Կողիր, առաքեն 'ի Միշակետոս 'ի Քաղաքն Եզեսիս. զի որ միանգամ գտոցի անդ զիրք ասացեալ նոցին սրոց հարցն առաջնոց, թարգմանեալ 'ի մեր լեզու՝ բերցեն փութով. զի յետ այնը 'ի Բիւզանդիոն առաքեսցեն 'ի նոյն գործ: Որոց ընկալեալ զհրապուրական թուղթս սուտակասպասաց ոմանց, իրը թէ պատրաստեն մեծն Սահակ և ՄԵԿՐՈՎ զայլս առաքել 'ի Բիւզանդիոն, վասն որոց առանց հրամանի վարդապետացն իւրեանց, նոյն ընդ նոյն շուեալ գնացին 'ի Բիւզանդիոն, նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց. և քաջ վարժեալ Նելին դպրութեամբ՝ ձեռնարկեցին 'ի թարգմանել և 'ի գրել: Եւ ընդ նոսա նախանձեալ ընկերոց իւրեանց աշակերտակցաց, որոց անստանքն Ղեւոն և Կորիւն կարգային, յիւրեանց կամաց եին առ նոսա 'ի Բիւզանդիոն: Ապա երանեն անդ Ցովիհան և Արձան, զորո կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ և ՄԵԿՐՈՎԼԱԿ. որոց յուլարար ուղեւորեալ և ծուլարար դեգերեալք պատաղեցն 'ի Կեսարիա. որոց ընդունելութիւն ամենեցուն արար Մաքամիսնոս եփակուպօսն Բիւզանդացոց »:

« Ապա եկեալ թարգմանիչքն մեր՝ զորոց անուանքն յիշատակեցաք յառաջակացացն, գտին զմեծն Սահակ և կՄԵԿՐՈՎ յԱշուշատ Տարոնոյ, և մատուցին զթուղթս և զկանոնն ժողովյն Եփեսոսի վեց սահմանեալ կանոնաւ զիխով, և զսոյդ օրինակս զրոց: Զոր առեալ մեծին Սահակայ և ՄԵԿՐՈՎԱՅ՝ զարժեալ թարգմանեցին զմիանցամ թարգմանեալ փութանակի, հանդերձ նորգօք վերտան յօրինել նորոգմանը. քանզի անգէտք էին մերում արուեստի, 'ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր: Վասն որոց առեալ մեծին Սահակայ և ՄԵԿՐՈՎԼԱԿ զմեզ առաքեցին յԱղեք-անդրիա 'ի լեզու պանծալի, 'ի ստոյդ յօդանալ հեմարանի վերաբանութեան»:

Եզնակ երէց (որ կարծի յեօթներորդ գարու կացեալ): « Առ որով Ասպուրակէս կաթողիկոս, և դարձեալ առ որով ընտրեցաւ Սահակ անուն լինել կաթողիկոս. որ է որդի Ներսեսի առաքինոց, թռան ԱԹանազինէ, թռուն սրբոյն Գրիգորի: Առ սովաւ և դպրութիւնք Հայոց յաջորդեալ, և կտակարանք եկեղեցոյ 'ի ամանէ յառաջ թարգմանեցան, և կարգք գործոցն Գրիգորի նորոգեալ արամի միով երանելիա Տարանացուոյ, որում անուն ՄԵԿՐՈՎԼԱԿ ճանաչէր. որ էաւ զձեռնազրութիւն երիցութեան 'ի նմին Սահակայ կաթողիկոսէ: Սա եգիստ նշանազիր դպրութեան հայերէն լեզուին վարելց արխակետացն հանգամանս. յորում ժամանակի լցան նորգօք կարգն յառաջադիմութեան: Եւ նոցա աշակերտ Ղեւոնդ այր սուրբ և ընտրեալ և հմարիտ 'ի գործ մշակութեան Աստուծոյ. և Արձան և Կորիւն և Եզնիկ և արբանեալք նոցուն հանդիսիցն, և ձեռնադրեալք 'ի նոյն սրբոյ կաթողիկոսէն»:

Երեք ժամանակակից պատմչաց խօսքերէն, — որշափ ալ տեղ տեղ մութ, պահասաւոր, զիրար շրանով և լուսայ կարօտ, — յայտնապէս կ'երևանայ թէ երկու թարգմանութիւնք եղած են աստուածաշունչ զրոց 'ի մեր լեզու. առաջինն ըստ մեծի մասին յասորւոյն 'ի ձեռն սրբոյն Սահակայ, և մասամի ալ 'ի յունէ 'ի սրբոյն ՄԵԿՐՈՎԼԱԿ: Արբոյն Սահակայ ասորական օրինակի մը կարօտ ըլլալուն պատճառ-

ներն՝ արդէն յիշատակեցինք, որուն՝ ինչպէս տեսանք, բացայաց կը վկայեն գլխաւոր պատմիչք դարուն և իրենց աշակերտեալք՝ տմենայն հաւատարիմ վստահութեան արժանաւոր անձինք։ Խսկ ոռորքն Մեսրովկ իր թարգմանութիւնն, զոր մեկին և որոշ կը յիշէ Խորենացի, ըրտ յունականին վրայէն, երբ կը գտնուէր Հայատանի այն մասին մէջ որ Յունաց իշխանութեան վերաբերելով քաղաքականութար՝ բնականարար չէր կրնար ունենալ այն դժուարութիւնը որ բռնադատեց զպարթեւ հայրապետն ասորականին դիմելու, զի դիւրին էր հոն գտնել զրնագիրս սուրբ Գրոց՝ ի յշն լեզու։

Բայց ինչպէս կ'երենաց՝ ի նոյն պատմշաց՝ նոյն խսկ աշխատասիրողք իրենց մեծ գործը մասամբ կամ ամրող աւարտելէն ետքն այ գոհ շեղան անոր փափաքելի և իրաւամբ պատուած կատարելութենէն։ Հաւ անականարար այդ տեղուութեան դիմաւոր պատճառը՝ ոչ այնչափ թարգմանութիւնն արուեստի պակասութեան մէջ էր, զոր և կ'ակնարկեն պատմիչք, կամ անոնց հմտութեանն ի գիտութեան յոյն և ասորի լեզուաց, զի անոր հակառակ վկայութիւնը կու տան, ինչպէս տեսանք, մանաւանդ նկատմամբ սրբոյն Սահակայ, այլ սուրբ զրոց հաստառուն և առոյդ օրինակներ շունենայնուն, որք յետոյ ըբրուեցան ի թարգմանչաց։ և իրենց երկիւղած զգուշաւորութիւնն չէր ներեր՝ առանց այդ ամէն վստահութեան արժանի օրինակներ ունենալու։ Կատարեալ և անթերի սեպել իրենց մեծ և հոյակապ վաստակը։

Աստուածաշունչ զիրք, թէսէտ գործ գերմարդկային, բայց այլւայլ թարգմանութեանց ու բազմապատիկ ընդօրինակութեանց պատճառաւ։ կրած էին զանազան ալլացյութիւնք և փոփոխութիւնք իրենց ընթերցաւածոց մէջ, զի և ամենայն թարգմանիչք, և մանաւանդ ամենայն գրչագրողք. հաւասար դիտութիւն և երկիւղած զգուշաւորութիւնն պահած չեն, ի հոյոց առ մեզ հուսուծ բազմաթիւ գրչազիրք, և անոնց իրարու հետ մանր ու երկայնամիտ բարդաստ թիւնն զայս յայտնի կը ցուցը նեն։ Ասկէ զատ, եկեղեցւոյ տապին դարուց մէջ երեցող հերձուածողք և աղանդապետք՝ իրենց կարծիքն ու վարդապետութիւնն աւելի հեշտեաւ ընդունելի ընելու, կամ անոնց մեծագոյն կարևորութիւն մը տալու դիտմամբ՝ դիմութ են այս միշտին՝ սուրբ զրոց ընթերցուածքը հանգարելու ։ Անշուշտ յապակիսի կասկածեի ձեռնձգութեանց զերծ չէին այն օրինակը՝ որ սրբոյն Սահակայ և Մեսրովկաց աշխատանաց առաջնորդք եղան։ կամ գէթ չէին տեսներ աննոց մէջ իրենց փափաքելի և մեծ ապէս հարկաւոր վատահութիւնը. և թերեւո այնչափ աւելի հաստատուեցան այս կարծեաց վրայ՝ որչափ յատաջեցին ի վաստակն թարգմանութեանն։

Այս պատճառաւա հարկ եղան իրենց դիմել առ պատրիարքն և առ կայսրն կոստանդնուպոլիսի՝ Կախ ինքն Մեսրովկ անձամբ՝ քանի մը գործակցացը հետ, և յետոյ իրենց աշակերուք փութացին երթալ ի քաղաքն թագաւորակաց։

Կ'աւանդէ պատմութիւն թէ կոստանդիիւնու մեծն՝ եկեղեցւոյ պայծառութեան ու բարեկարգութեան համար ըրած ուրիշ զանազան գովելի շանգերէ զատ՝ աստուածաշանչ զրոց օրինակներուն հաւատարիմ և անտիսեղծ պահպանութեանն համար՝ Եւսեբեայ Պամֆիլացւոյ յանձնեց որ իր անմիջական վերակացութեամբ և շանիւք՝ ճարտար և իմաստուն զրչաց ձեռքով սուրբ զրոց սուռզազիր օրինակներ գաղափարել տալով բազմացնէ, և զանոնք կայսերական գանձուն մէջ ամենայն զգուշութեամբ պահելով, ուր որ պէտք էր՝ անոնց ընթերցուածոց պարունակածին համեմատ օրինակներ ցրուէ կայսերսութեան ընդարձակ գաւառաց մէջ։ Ասանկով՝

սուրբ գրոց մէջ սուսր և անհամաձայն ընթերցուածոց մուտք կը խափանէին, արևելքան եկեղեցիոց մէջ գործածուած որինակի' իրարու զուգաձայն և միարան կ'ըլլային, և շատ կրօնական վիճոց և տարածայնութեանց առջեւը կ'առնուէր: Որոգինէ՛ եկեղեցւոց մեծ վրոգապետ, և սուրբ գրոց վրայ ըրած աշխատութեամբք նշանաւոր և մեծարոյ, ետքանասնից և ուրիշ թարգմանութեանց և հերրայական բնագրին իրարմէ ունեցած տարբերութիւնները քններ, զատեր ու իրարմէ տարբեր նշանակներով որոշեր էր իր սրբագիր տառից վրայ ըրած հմտական և բազմավաստակ աշխատասիրութեանց մէջ, բայց իրմէ ենքը եկող անընտրող կամ ոչ քաջ մոսադիր կամ իմաստուն ընդօրինակողը՝ շփոթութեան և խառնակութեան պատճառ եղեր էին զաններ գաղափարելու ձեռք զարկած տաննին: Այսպիս ընթացի մը հետեւանք անպատշաճութիւններն դարմանելու համար՝ սուրբն Պամիիլոս վկայ Բիւրիտոնացի' ու իրեն մուերիմն ու աշակերտ Եւսեբիոս Կեսարացի' ետևէ եղան եօթանանից ընտիր և սուուգահաւատ օրինակի մը գրութէւն: Ա.Ա և այլ օրինակներ գաղափարել տուին, ինամոնվ սրբագրել ու քարդասուել տալով Որոգինեայ յիշուած վկեցիւն ու Քահիցեան կոցուած երկասիրութեանց սկզբանագրին վրայ, որ կը պահուէին 'ի գարանս մատենից քաղաքին կեսարացւոց: և այդպիսի խնամքով յղկուած ու սրբագրուած օրինակը՝ Պաղեստինականը կը կոչուէին. ուր այս ուղղագրութիւնք ընդունուած էին 'ի Հոգևորական իշխանութենէ գաւառին, և անոնց համեմատ կ'ըլլային հրապարակական ընթերցմոնքը յեկեղեցիս: Սրբոյն Պամիիլը լեայ վկայական մահուրնէն ետքը՝ այդ նուիրական ու ցանկալի ժառանգութիւնը՝ իր բարեկամին ու գործակիցն Եւսեբեայ մնաց. որուն ձեռքովն ու Զանիւք փոխադրուեցաւ. ի կոստանդնուպոլիս: Բարեպաշտ կայսեր վախիպը կատարելու համար՝ Եւսեբիոս այս ընտիր վկայեալ ու արդէն գործածուած օրինակը պէտք էր որ նախամեծար սեպէր, ինչպէս որ ըրաւ ալ:

Այսպիսի գանձի մը գոյութիւնն 'ի Բիւզանդիոն՝ անջուշու անծանօթ չըր մեր զպրութեան նորոգացը, և զայն ձեռք ձգելը՝ իրենց աշխատութեան վաւերականութիւն ու յարդ տարս համար՝ ամէն բանէ աւելի փափաքի: Այս նպատակաւ էր թարգմանչաց երթն 'ի Բիւզանդիոն: — Բայց մեզ առ այժմ թողով զիրենք 'ի ճանապարհորդութեան, գառնանք 'ի Հայոստան՝ առ մեծարեալ վարդապետ համար:

Պատմեցինք թէ սուրբն Ասկակ' յորդորեալ և խախտուեալ 'ի բազմապաշտաթախանձանաց թագաւորին, ուխտի եկեղեցւոյն և աշխարհի բազմութեան՝ մէկէն իր թարգմանութեան ձեռք զարկաւ՝ առանց սպասելու ստուգացյն և ընտիր օրինակաց սուրբ Գրոց, որ յայնմ՝ միջոցի գեռ ձեռքն հասած չէին: Խնթադրեցինք՝ Փարպեցւոյն ու Խորենացոյ խօսքերէն, թէ ինչ որ 'ի վեր քան զամենացն անհրաժեշտ կարեար էր՝ հայրենի աշխարհին հոգեւոր օգտին համար, զայն փութացաւ թարգմանել. եկեղեցայան պատմամնց մէջ կարդացուած և 'ի գործածութեան եղած ընթերցուածներն. որով մեծ կարօտութիւն մը լիցուեցա, ու այնուհետեւ ու եւս « Բազմութիւնք ժողովրդոց ունացնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն.... և աշ զոր յուսումնասէր ժողովելոցն տեսաննին օգտեալս 'ի վարդապետութիւնէ հոգեւոր իրատուցն »:

Ոմանք 'ի բանասէր հմտից' ընդհանրապէս յունական կամ ասորի ինդուով եկած զեցական պաշտամանց գործածութիւնն առ մեզ անկարելի կ'ենթադրեն. Հնարէ,

Կըսեն, որ գտնուած ըլլան 'ի Հայաստան կողմանք՝ ուր պաշտամունք եկեղեցւց, այսինքն պատարագի սպասարկութիւնն և ժամանակարգութեանց ազօթք՝ բոլորպին յոյն կամ ասորի լեզուաւ կատարուէին. բայց աներկարայելի է որ ընդհանուր չէր և չէր իսկ մարդ լինել. քանզի ի՞նչպէս հնար է լինել որ ամբողջ ժողովուրդ մը և ազգ և աշխարհ մի քրիստոնեայ, ճոխացեալ իր եկեղեցեաւն և իրեան հայրապետօք բարեզզարդեալ, բնաւ ընտանի լեզուաւ ազօթից ձև մի շոնենայ: Եւ ի՞նչ հարկ կար, կ'ըսեն, մերոց որրոց հարց ասուուծարելոց, որպիսի ոուրբն Յուսուփկ և Համբաւեանի նոսա իրեա բարեկարգի եկեղեցեաւ մեծն Ներսէս Պարթեւ, զայդապիսի աններեի անհոգութիւն անհոգմանային, մանաւանդ զի առ Բիւզանդայ և Մեսրովզայ երիցու կ'ընթեռնումք թէ սուրբն Ներսէս առաւոտեան ժամանակարգութիւնն կատարելու վրա էր, երբ Գնելյա անպարտական մահուան գոյժն հասաւ իրեն: Միթէ զուուրը գիրու բովանդակի 'ի հայ լեռու վերածելու շափ՝ դժուարին ինչ էր նաև զանփոփոխելի որ ըրէական ազօթից ձև մը՝ 'ի հայ լեզու գնել, և 'ի դիր առնուլ յոյն և ասորի տառիք՝ որք արդէն 'ի գործածութեան էին :

Համամիտու այս կարծեաց և այդպիսի անտեղութեան մը, սակայն գժուարին թուի մեզ ժամանակակից պատուցաց բացայսայտ վկայութիւնքը տարակուսի տակ ձգել. և այնշափ աւելի՝ որ երեքտասան դարուց անջրպես մը կայ ընդ մեզ և ընդ նոսա և իրենց ժամանակին հանգամանք՝ դեռ փափաքելի լուսով և ժամօթութեամբն հասած շեն մինչև առ մեզ: Ալդեգ Վլթամայ, Յուսկան Ներսիսի մեծին և իրենց նմանեաց ժամանակի հանգամանք չկրցին փոփոխութիւն մը, երբ յունական ազգեցութիւնն և իշխանութիւնը միօսն այլ եւր շափ ու սահման շնանշնա, և սասանեան պետութիւնը ամէն միջոց օրինաւոր կը գտնէր իր կամքն առ աջ տանելու համար: Եւ նորա՞ որ ուզանուու պէս կը փոփոխէին մեր թագաւորներն, աղիկամի 'ի գահ բարձրացընելով ու անհէ զար առնըով, — որք սրբայ Ստհակայ հայրապետի պէտ աննման անձինք 'ի դաս կը կոչէին մինչև իրենց արքունական դուռն. շնայելով ոչ անոնց հասակին և ոչ պատույն, և կը դատէին կը դուտապարտէին, և իրենց հաճոյիցն ու կամաց համեմատ իր նուրբական աստիճանին պաշտամանց շափըն ու սահմանը իրենք կ'ըլլացին որոշով, զվարդապետէն միացն թաղով Վահակայ, և իրեն անարքան հակառակաթոռն Շմաէի ու Բրգիշցն տակով զիշխանութիւն ձեռնազրելոց, չի՞ն կրնար նոյնպիսի սասա և բռնութիւն բռնեցընել նաև եկեղեցական պաշտամանց լեզուի և կարգւաւորութեան նկատմանը սրոնք իրնային արդէն ընկալեալ և 'ի կիրառութեան եղած սովորութեանց աննման ըլլալ և հակառակ: Այդպիսի վարմունք մը անկարելի չի թուիր մեզ: Պատմութեանց մէջ կը յիշարն նման դէպք, երբ ազգք և ժողովորդք ունենալով իրենց լեզուն և հոսարտկաց ազօթից ձեռը, բռնադրասուին փրանին տիրող ազգին լեզուով ալոթեւ յեկեղեցով, երբ ազգաց իրարու հետ ձուման քաղաքագիտական որդէնք գլցն թուին պահանջել:

Բայց ինպէս ըսինք յառաջազգոյն, լակ ենթադրութիւն մէկ սցս կամ կարծիք, զդր կանուխ քան զմեզ ունեցած է բազմահմտ և բանիքուն վարդապետն մեր ինձին ճեան. զի Խորենացույն և Կորեան արդէն յիշաած խօսքերն մէջ բերելով՝ կը յաւելու իր ձեռապիք մէկ քաղաքածոյն մէջ. « Սուրբ՝ Սահակ կանիսաւ ի յաւակուն 'ի հայ բարբառա թարգմանեալ էր զկոտակարանն, որ յեկեղեցին ընթերցեալու իրնէր. պայմանքն զայն ընթերցաւածն զրոց որ 'ի ժամանակարգութեան և 'ի պատարագի ընթերցաւածն էր, այս է զոր կոչէ եկեղեցական զրոց գումարութիւն: Ալ յորժամ Եզնիկ,

1 Պարտեան (Ա.Վ.) . յԵրեւանուու Հանդիսի Ասիական ընկերութեան ...

Ղեւանդ և նոյն ինքն կորիւն դառնային 'ի Պղոսոց հանգերձ հասատտուն օրինակօց աստուածատուր զրոցն, այսինքն ընտիր օրինակօց աստուածայունց զրոց' զոր ետուն նոցա յարքունական զրատանէ, յայնժամ հանդերձ Եղնակաւ զյառախաչոցն թարգմանեալն՝ որ եղեւ թարգմանութիւն փութանակի, հաստատէր ձշմարիս օրինակօց բերելովք, այսինքն բազում ուրեք ուղղագրէր ըստ ասուզարան ընտիր օրինակին զոր բերին 'ի Պղոսոց':

Այս՝ ըստ կարծեաց Հնախօս և բազմահաշակ հեղինակին:

Սակայն մեզի կ'երևնայ որ այս վերջի ախսատութիւնն ըլրած՝ սրբոյն Սահակայ աստուածաշատնչ զրոց մանական թարգմանութենէ մը զատ է՝ ասորի թարգմանութեան վրայէն ըլրած մեծ և ծանր վաստակը:

Շարումակեցի

Հ. Գ. Զ.

## ՆԵՄԵՍԻՈՍԻ

Յ Ա Դ Ա Գ Ս Բ Ն Ո Ւ Թ Ե Ս Ա Ն Մ Ա Ր Գ Ո Ց

(Տիս էջ 31)



Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Բ Ո Ր Դ

Բաղազս միաշորութեան հոգույ և մարմնոյ:

Խնդրելի է թէ զիարդ լինի միաւորութիւն անձին և մարմնոյ, քանզի տարակուսելի է իրդ, իսկ թէ ոչ միայն յայսցանէ<sup>2</sup>, այլ և 'ի մտաց հաստատեցաւ մարդ, որպէս ասացին ոմանք, ևս առաւել է տարակուսելի: Քանզի ամենայն որ ժողովի 'ի միոյ էութեան գոյացութիւն՝ ամենայն իրօք միաւորի. և միաւորեալին այլայլին, և ոչ մընան որ ինչ յառաջադպոյնն էին, (որպէս և 'ի վերաց տարերցս ցուցցի<sup>3</sup>), քանզի միաւորեալը՝ այլ ինչ եղին: Արդ, զիարդ կայ՝ մարմնին միաւորեալ ընդ անձին՝ տակաւին մնայ մարմին. և կամ դարձեալ, անձն՝ անմարմին գոլով և էապէս ըստ ինքեան, զիարդ միաւորի ընդ մարմնոյ և մասն լինի կենդանւոյն, ամբովզ պահելով զիւրն էութիւն անշխորթ և անսապական: Քանզի հարկ է կամ միաւորիլ անձինն և մարմնոյ, և 'ի միասին այլայլի և ապականիլ երկոցունց, որպէս տարերցս, և կամ՝ ոչ միաւորիլ ըստ նախաճառեցելոյս անտեղութեանց, այլ առընթեր կալ, որպէս զպարաւորս 'ի պարու կամ

1) Ի խորագրին ևեթ հոգույ եգեալ կայ յամենայն ձեւագիր օրինակու մեր:

2) Դմա, իսկ եթէ ոչ միայն յանձնէ և 'ի մարմնոյ սակցի գոլ մարդոյ, այլ և 'ի մըաց՝ իրդ յեղորդդ իմ բաղկացուցէ, ըստ առելց ոմնաց, յայնժամ՝ առաւել ևս ամեն գետուարութիւնքն՝ ի բացայայտէ:

3) Տիս 'ի Գլուխն Հնիգերորդ: